ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի մարտի 18-ի թիվ 2 որոշմամբ

Ընթացակարգի ծածկագիրը՝ ***ՃԴ-ԳՀՇՁԲ-2024/04***

Պատվիրատուն՝ **«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը,** որը գտնվում է **ք.Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3** հասցեում, հայտարարում է գնանշման հարցում, որն իրականացվում է մեկ փուլով:

Սույն ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել **Հյուսիս-հարավ ավտոճանապարհային միջանցքի շինարարություն (Տրանշ 4) ծրագրի 2023-2026թթ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտի անցկացման** ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն ընթացակարգին մասնակցելու հավասար իրավունք:

Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող պայմանները սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:

Ընտրված մասնակիցը որոշվում է ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Սույն ընթացակարգի նկատմամբ կիրառվում են Առևտրի համաշխարհային կազմակերպության պետական գնումների համաձայնագրի դրույթները, եթե գնման գինը գերազանցում է Առևտրի համաշխարհային կազմակերպության պետական գնումների համաձայնագրով սահմանված շեմերը:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն անվճար ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել **ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3** հասցեով, փաստաթղթային ձևով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված **14-րդ օրվա ժամը 16:00-ը:** Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Հայտերի բացումը տեղի կունենա **ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3** հասցեում, **2024 թվականի ապրիլի 1-ին ժամը 16:00**-ին:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքարկումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Արմինե Շալունցին:**

Հեռախոս՝ 010 54 21 76
Էլ. Փոստ՝ procurement@armroad.am
Պատվիրատու՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ